ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2025թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՏԱՐՈՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար հայ նկարիչ Տարոն Արտավազդի Մուրադյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԱՐՈՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տարոն Մուրադյանը ծնվել է 1961 թվականի դեկտեմբերի 26-ին, Երևանում:

1978-1982թթ. սովորել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, 1984-1990թթ.՝ Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայում:

2001 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Տարոն Մուրադյանի ստեղծագործությունները մշտապես ցուցադրվում են Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, «Արամե» պատկերասրահում:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել՝

- 1993 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 1996 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 2000 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 2001 Ժամանակակից արվեստների թանգարան, Երևան, Հայաստան
- 2002 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 2003 Միջազգային Արտէքսպո, Նյու Յորք, ԱՄՆ
- 2004 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 2005 Մուվանս պատկերասրահ, Փարիզ, Ֆրանսիա
- 2006 Բել-Էյր գեղարվեստի պատկերասրահ, Ժնև, Շվեյցարիա
- 2007 «Վեներան և կնոջ ինտուիցիան», Դանիա, Հոլանդիա, Ֆրանսիա:

Խմբային ցուցահանդեսներ է ունեցել՝

- 1987 Հայաստանի նկարիչների միություն, Երևան, Հայաստան
- 1993 Անկախ արվեստի ցուցահանդես «Մեծ պալատ», Փարիզ, Ֆրանսիա
- 1998 Հայկական գույներ, Գերմանիա
- 2001 Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան, Հայաստան
- 2003 «Ռոմանտիկ ռեալիզմ», Արամե պատկերասրահում, Երևան, Հայաստան
- 2004 «Խաղաղ կյանք», Արամե պատկերասրահում, Երևան, Հայաստան
- 2007 «Երազ ցուցահանդես», Հոլանդիա և բազում այլ ցուցահանդեսներ:

«Տարոն Մուրադյանի արվեստը» խորագիրը կրող գիրքը հրատարակվել է 2007թ. Նիդեռլանդներում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հայ նկարիչ Տարոն Մուրադյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում՝ առաջարկվում է Տարոն Արտավազդի Մուրադյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ